Արձանագրություն N 4
ՋԲՄ-ԱՇՁԲ-2018/3 ծածկագրով՝ «Ջերմուկ համայնքում փողոցների շին. բարեկարգման /վերակազմավորում/ Շահումյան և Մյասնիկյան փող. II-րդ փուլ» աշխատանքների մրցույթի ընթացակարգի հանձնաժողովի կողմից հայտերի գնահատման նիստի

ք. Երևան «22» «հունիսի» 2018թ.
ժամը՝ 12:00

Հանձնաժողովի նախագահ

Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳՊ/ԳԱՊ)	Սամվել Առաքելյան
անդամներ՝	
1.Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ)	Սարգիս Հովհաննիսյան
2.Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ)	Էդուարդ Ջանջուղազյան
3.Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ)	Արթուր Սողոմոնյան
4.Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ)	Արեգ Եղիյան
5.Գնման Պատասխանատու/ Մրցույթի համակարգող (ԳՊ/ՄՀմ)	Լիլիթ Սեդրակյան

1. ՋԲՄ-ԱՇՁԲ-2018/3 ծածկագրով ընթացակարգի անգործության ժամկետի ընթացքում ստացված բողոքի վերաբերյալ

(Ս.Առաքելյան)

1.1 ՋԲՄ-ԱՇՁԲ -2018/3 ծածկագրով մրցույթի անգործության ժամկետի ընթացքում «ԱԱԲ Պրոյեկտ» ՍՊԸ-ի կողմից 18.05.2018թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ներկայացվել էր բողոք, որով ընկերությունը պահանջում էր դադարեցնել գնահատող հանձնաժողովի 07.05.2018թ-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված՝ «Եղեգնաձորի ՃՇՇ» ՓԲԸ-ին հաղթող ճանաչելու և պայմանագիր կնքելու մասին որոշումը, ինչպես նաև հաղթող ճանաչել «ԱԱԲ Պրոյեկտ» ՍՊԸ-ին:

18.06.2018թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը որոշում կայացրեց բավարարել «ԱԱԲ Պրոյեկտ» ՍՊԸ-ի կողմից ստացված բողոքը մասնակի, մասնավորապես՝ «Եղեգնաձորի ՃՇՇ» ՓԲԸ-ի հայտը հրավերի պահանջներին բավարար գնահատելու, առաջին տեղ զբաղեցրած և ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումները դադարեցնել, իսկ «ԱԱԲ Պրոյեկտ» ՍՊԸ-ին Մրցույթի առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու պարտավորեցնելու պահանջի մասով բողոքը մերժել:

2. Հանձնաժողովը որոշեց՝

(Ս.Առաքելյան)

2.1 «ՋԲՄ-ԱՇՁԲ-2018/3» ծածկագրով մրցույթի մասնակից «Եղեգնաձորի ՃՇՇ» ՓԲԸ-ի հայտը համարել հրավերի պահանջներին անբավարար և դադարեցնել առաջին տեղ զբաղեցրած և ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումները:

2.2 «ՋԲՄ-ԱՇՁԲ-2018/3» ծածկագրով մրցույթի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին՝ «ԱԱԲ Պրոյեկտ» ՍՊԸ-ին:

2.3 «ԱԱԲ Պրոյեկտ» ՍՊԸ-ին ծանուցել, որ հրավերով սահմանված կարգով ծանուցումը ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային ձևով ներկայացնի հրավերով պահանջվող փաստաթղթերը՝ ուղարկելով դրանք Պատվիրատուի հետևյալ էլեկտրոնային հասցեով՝ l.sedrakyan@atdf.am՝ հաստատելով դրանք էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

2.4 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել՝ **«ՋԲՄ-ԱՇՁԲ-2018/3»** ծածկագրով մրցույթի մասնակիցների մասին պահանջվող տեղեկատվությունը ստանալու նպատակով:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ս.Առաքելյան)

3.1 «ՋԲՄ-ԱՇՁԲ-2018/3» ծածկագրով մրցույթի հանձնաժողովի նիստ հրավիրել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից եզրակացությունը ստանալուն հաջորդող աշխատանքային օրը, ժամը՝ 12:00-ին, ՀՏՋՀ գրասենյակի շենքում, հասցեն՝ ՀՀ, ք.Երևան, Ուլնեցի 31., 4-րդ հարկ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Մասնակցում էին՝ հանձնաժողովի.

Հանձնաժողովի նախագահ
Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳՊ/ԳԱՊ) — Սամվել Առաքելյան

անդամներ՝
1.Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ) — Սարգիս Հովհաննիսյան
2.Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ) — Էդուարդ Ջանջուղազյան
3.Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ) — Արթուր Սողոմոնյան
4.Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ) — Արեգ Եղիյան
5.Գնման Պատասխանատու/ Մրցույթի համակարգող (ԳՊ/ՄՀմ) — Լիլիթ Սեդրակյան